

Մաթիկը, նման ամէն գիտունի, կ'արհամարհէր լրագիրը, զայն անուանելով ամբոխին «փլաւ»ը, մեր մէջ անոր առատութիւնը յայտարարելով նշան մը ազգային անկումի: Ինչ պիտի ըսէր երանելի գիտնականը, եթէ հասնէր մեր օրերուն, ուր ստեղծուած է «թերթախտ» բառն ալ, անշուշտ պէտքի մը իբր արտայայտութիւն: Գասապ օղլուն անոր յիշեցուց միւս առածն ալ, որ կը խրատէր «պագ ու ճակտիդ դիր այն բազուկը, զոր չես կրնար կոտրել»: Ասիկա ճիշդ էր հինգերորդ, ինչպէս տասնչորրորդ դարերուն, ու աւելի քան հիմա:

Այն ատե՛ն: Այսինքն՝ յեղափոխութի՞ւնը, որ հերքումն իսկ է այդ վարդապետութեան: Ինչպէ՞ս վարել մեր ազգին նաւը:

Մաթիկը տարագեց մեր մտածումները այդ հարցին շուրջ ալ: Ու կորի՛ղը անոնց, - ինչո՞ւ դէմ ելլել մեր պատմութեան ընդհանուր ցուցմունքին ու հերքել ջանալ տասնհինգ դարերու գերութիւնը: Երբեւիցէ, փաստօրէն եղա՞ծ է անկախ մեր ժողովուրդը: Իր պատմութիւնը ատոր հակառակն է, որ կը հաստատէ: Վա՞տ: Ան ալ չէ եղած այս ժողովուրդը: Բայց մեր սխալը՝ չփոթելն է անհատական նկարագիրները հաւաքականներով: Չէ կարելի ուրանալ մերիններուն ուժով անհատականութիւնը, այնքան ուժով, որ չեն սեղմուիր մեզմէ դուրս մեծ փաստեր, արժանիքի, ուժի, խելքի, կամքի: Մնալով մեր պայմաններուն մէջ, մեր անհատներուն քաջութիւնը ճիշդ չէ ուռեցնել, հոմանիշ ընելու չափ արկածախնդրութեան, յիմարութեան: Ո՞ր է փաստը հաւաքական կամքին, որով ժողովուրդները կը տիրեն նախ իրենց, յետոյ ուրիշներուն: Ինչո՞ւ չկայ գիտութիւն մը, որը ճշդէ գերութեան սթիկմաթները, անոնց աւերը հոգիներուն մէջ: Ինչո՞ւ ուրանալ իմաստութիւնը մեր պապերուն, այսքան արագ, կէս դարու տեսութիւններու փայլովը լուծել ջանալով ինչ որ երեսուն կէս դար, տարօրինակ հանգիստութեամբ մը պարտադրեր էին մեզի: Որո՞նք են այն առաքինու-